ԾԱՂԻԿ կը հրատարակուի Շաբաթ օրերը։ — Հատը 40 փարա։

Բաժանորդագին ԿԱՆԽԻԿ — Պոլսոյ համար տարեկան 45 ղրշ. վեցամսեայ 23 ղրշ. եռամսեայ 12 ղրշ։— Գաւառաց համար տարեկան 50 ղրշ. վեցամսեայ 26 ղրշ. եռամսեայ 14 ղրշ։

Ռուսիոյ համար տարեկան հինգ բուբլի։ Ուրիշ երկիրներու համար 12 ֆրանք։

Գաւառներէն գրոշմաթուղթ կ'ընդունուի։

Միայն երեք թիւ ապառիկ կը ղրկուի։ այնուհետև բաժանորդագին չը վճարողը կը դադրի թերթ ընդունելէ։

Ծանուցման տողը 2 ղրշ։

40 փարա

ԾԱՂԻԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Քաղաքական եւ Գրական

ԾԱՂԻԿ ի վերաբերեալ ամէն գործի համար դիմել Առ Տնօրէն-Հրատարակիչ ՅՈՎՆԱՆ Գ. ՓԱԼԱՃԱՇԵԱՆ
Պոլիս, Էսկի-Զապթիէ, Պերպերեան Տպարան

درعليه‌ده اسكى ضبطيه زقاغنده بربريان مطبعه‌سنده
« زاغيك » غزته‌سى مديرى پالاقاشيان حوونان

HOVNAN PALACACHIAN
Directeur du journal arménien « Dzaghik »,
Rue Esski-Zabtié, Imprimerie N. Bérbérian
CONSTANTINOPLE

40 փարա

ՆՈՐ ՇՐՋԱՆ — Ա. ՏԱՐԻ. ԹԻՒ 52 — ՇԱԲԱԹ — 7 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1891

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ "ԾԱՂԻԿ"Ի

Ներկայ թուով կը լրանայ «Ծաղիկ»ի առաջին տարւոյ շրջանը։ Առաջիկայ շրջանին մէջ «Ծաղիկ» պիտի հրատարակուի քիչ մ'աւելի փոքր դիրքով, բայց ութ երեսի փոխարէն 16 երեսով, որ ըսել է իբր կրկին ծաւալով, խմբագրական նոր կարգադրութեանց համաձայն առաւել ճոխ և ընտիր պարունակութեամբ, և թերևս պատկերազարդ յաւելուածով մը։ Պատկերաց հայթայթման համար արդէն իսկ բանակցութեան մտած ենք Բարիզեան շաբաթաթերթի մը հետ։

Առաջիկայ շրջանին մէջ «Ծաղիկ» պիտի ունենայ նաև ծանուցմանց յատկացեալ յաւելուած մը, և արդէն իսկ ընդունած է մէկ քանի առաջնակարգ դրծարանաց և Պոլսոյ հրապարակին կարևոր հաստատութեանց և վաճառատանց աղդերը։ Դներն յոյժ չափաւոր են և վճարմանց մասին կ'ընծայուին դիւրութիւնք։

Խմբագրական, տպագրական և այլ կարգադրութեանց պատճառաւ, և նաև լրագրոյս վարչական մասն առաւել կանոնաւոր վիճակի վերածելու համար, «Ծաղիկ»ի երկրորդ տարւոյ առաջին թիւը պիտի հրատարակուի հոկտ. 15ին։ Այս մի քանի շաբաթուան յապաղումէն չը պիտի վնասուին բաժանորդք, վասն զի իրենց բաժանորդագրութիւնը լրացընելու համար՝ հարկ եղածին չափ թիւ պիտի ստանան ըստ հաշուոյ։ Իսկ նոքա որոց բաժանորդագրութիւնը լրացած լինելով, կ'ուզեն նորոգել, և նոքա որ նոր բաժանորդ պիտի արձանագրուին, պէտք է ընդ վոյթ խմացնեն, որպէս զի առաջին թիւէն սկսեալ կանոնաւորապէս ստանան թերթերը։

«Ծաղիկ»ի յառաջիկայ շրջանի բաժանորդագինը պիտի լինի, թէ՛ Պոլսոյ և թէ՛ գաւառաց համար, 60 ղրուշ կանխիկ վճարելի։ Վեցամսեայ և եռամսեայ բաժանորդագրութիւնք ևս կ'ընդունուին։ Զեռքէ պիտի ծախուի հատը 50 փարա։

Կը խնդրուի «Ծաղիկ»ի բարեկամներէն, «Ծաղիկ»ի ուղղութեան համակրողներէն, ուր ուրեք որ կան, աշխատիլ ամէն շրջանակներու մէջ տարածել «Ծաղիկ»ը և յառաջիկայ շրջանին համար տալ կարելի եղածին չափ աւելի բաժանորդ։ «Ծաղիկ» իւր մասին պիտի ջանայ անշուշտ ամէն կարելին ընել՝ հայ ժողովրդեան մտաւոր և բարոյական զարգացմանն համար։

Կը խնդրուի նոյնպէս այն գործակալներէ կամ բաժանորդներէն որոնք դեռ որ և է գումար մը պարտական կը մնան խմբագրութեանս, հաճին կարդադրել իրենց հաշիւը նոր շրջանէն առաջ։

ԾԱՂԻԿի խմբագրութիւնը հաստատած է Կ. Պոլիս, Պահչէ-Գաբու, Թաշ խան, թիւ 50։ Ուստի հոն պէտք է դիմել ԾԱՂԻԿի վերաբերեալ ամէն գործի համար և հոն ուղղել ամէն նամակ կամ դրութիւն, Տնօրէն-Հրատարակչին անուան։

ԳՐԱՍԵՆԵԱԿ ՑԱՆԳՆԱԿԱՏԱՐՈՒԹԵԱՆ

ԾԱՂԻԿի Տնօրէնութիւնը պատիւ ունի ծանուցանել իւր ընթերցողաց թէ, գոհացումն տալու համար այն խնդրանաց զոր յաճախ կ'ընդունի, հաստատած է Ցանգնակատարութեան Գրասենեակ մը։

Ցանգնակատարութեան գրասենեկի նպատակն է ծառայել իբրև միջնորդ արտադրիչներու և սպառիչներու միջև, գոհանալով փոքրիկ սակով մը որ կ'որոշուի ապրանաց տեսակին և քանակին համաձայն։

Ցանգնակատարութեան Գրասենեակը կը հայթայթէ մեծ և փոքր քանակութեամբ ամէն տեսակ ապրանք թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ Եւրոպական հրապարակներէն դնելի, ինչպէս, գիրք ամէն լեզուաւ, պատկերք, ձայնագրութիւնք, դպրոցական և գրասենեկի պիտոյք, ժամացուցի, տպարանական եւ այլ արհեստական գործիք, կտաւեղէնք, ասուեղէնք, ըմպելիք, անուշահոտութիւնք, կահ կարասիք, եւ այլն, եւայլն։

Վճարմունք կանխիկ են, բայց ի հարկին կարելի է պայմանաժամաւ եւս գործել այն տանց հետ որ կրնան արտադրիչներն ապահովել։ Փոխադրութեան ծախք կը պատկանին յաճախորդաց։

Ցանգնակատարութեան Գրասենեակը կ'ըստանձնէ նաև վաճառումն ներքին բերքերու թէ՛ Պոլսոյ և թէ՛ օտար հրապարակաց վրայ։ Առ այդ կը բաւէ ղրկել վաճառելի ապրանաց նմոյշները։

Ցանգնակատարութեան Գրասենեակը կը փափագի ունենալ թղթակիցներ գաւառական քաղաքներու մէջ։

Թղթակցութիւնք պէտք է ուղղուին առ Տնօրէնութիւնն Ցանգնակատարութեան գրասենեկի, Կ. Պոլիս, Պահչէ գաբու, Թաշ խան, թիւ 50։

ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Բ. ՆԻՍՏ

Անցեալ կիւրակէ օր ժամը ճիշդ 6 ½ին գումարելի Ուսուցչական ժողովը բացաւ իւր ատեանը ժամը ճիշդ 8ին։ Այս անգամ ևս կ'ատենապետէր Մեծ. Կարապետ էֆ. Իւթիւճեան։ Դիտելի էր որ առաջին նստին ներկայացողներէն մաս մը բացակայ էին այս անգամ, իսկ անոնց փոխարէն կային ուրիշներ որոնք նոր կ'երևէին։ Բայց վերջապէս, ներկայք, աւելի քան 50, պատկառելի թիւ մը կը կազմէին։ Այս անգամու գումարումը շատ կանոնաւոր եղաւ, հակառակ նախորդին։ Իբրև ունկնդիր՝ պահ մը ներկայ գտնուեցան խորհրդակցութեանց Գեր. Տ. Մատթէոս եպիս. Իզմիրլեան, Գեր. Տ. Գէորգ Ծ. վարդ. Իւթիւճեան և Մեծ. Ցովհ. էֆ. Թորոսեան։

Նախապէս կարդացուեցաւ նախորդ նստի ատենագրութիւնը, որուն խմբագրութիւնը խիստ թերի գտնելով ժողովը, որոշեց՝ առաջարկութեամբ Կոստանդին Ֆ. Սպանդարեանցի՝ իւրաքանչիւր նստի համար երկու դիւանադպիր յատկացնել խորհրդակցութիւնները նոյնութեամբ արձանագրելու պաշտօնով, որպէս զի ատենագրութիւնք կազմեն ապա պատմութիւնն ուսուցչական ժողովոց։ Այս անգամու համար դիւանադպիր կարգեցան Գալուստ էֆ. Մալաթեան և Միհրան էֆ. Մոզեան։

Օրակարգի խնդրոց վրայ յաջորդաբար ճառեցին Գալուստ էֆ. Մալաթեան, Միհրան էֆ. Ասքանազ, Ռէթէոս էֆ. Պէրպէրեան և Մինաս էֆ. Ծալեան։ Ճառախօսք՝ իբրև եզրակացութիւն իրենց բանից, զանազան առաջարկութիւններ ըրին։ Գ. էֆ. Մալաթեան առաջարկեց ի մէջ այլոց՝ վարժարանաց մէջ հաստատել Մանկավարժական մատենադարաններ, ուսուցչական ժողովներ նոյն վարժարանի ուսուցչական մարմնով, հրատարակել մանկավարժական թերթ մը, պահել վարժապետական ժողովոյ գոյութիւնը, մանկավարժական խնդիրներ դնել մրցման, եւայլն։ Պէրպէրեան էֆ. ի մէջ այլոց առաջարկեց իրաւ յայտնել որ Կեդր. վարժարանը լոկ վարժապետներ հասցնելու նպատակին ծառայէ, և Միհրան Ասքանազ էֆէնտիի «Ծաղիկ մանկանց» կրթական հանդէսը, որ արտօնագրի չը գոյութեան պատճառաւ այլ ևս չը հրատարակուիր, պաշտօնական պաշտպանութիւն վայելէ և անխափան շարունակէ իւր հրատարակութիւնը։ Նմանօրինակ առաջարկներ ըրին և միւս ճառախօսք։

Ի վերջոյ, ճառախօսք ի մի ձուլելով իրենց առաջարկութիւններն, ժողովին մատուցին հետևեալ բանաձևը որ ընդունուեցաւ միաձայնութեամբ.

«Ուսուցչական ժողովս միաձայնութեամբ համամիտ գտնուեցաւ Մանկավարժական ուսմանց կամ ուսուցչի պատրաստութեան կարեւորութեան, և իբր միջոց այս պէտքին գոհացման Թրքահայոց մէջ, պատշաճ կը համարի․

Ներկային համար,

Ա․ Ուսուցչական ժողովոյ տարեկան գումարմանց շարունակութիւնը։

Բ․ Իւրաքանչիւր Թաղ․ վարժարանի մէջ կազմել գէ՛թ ամսական Ուսուցչական ժողովներ՝ նոյն վարժարանի ուսուցիչներէ։

Գ․ Հաստատել իւրաքանչիւր Թաղ․ վարժարանի մէջ Մանկավարժական մատենադարան։

Դ․ Մանկավարժական թերթ մ՚ունենալ և առ այս Մ․ էֆ․ Ասքանազի ատկից առաջ հրատարակած «Դաստիարակութեան և Կրթութեան հանդէսն» յարմար դատելով՝ խնդրել ազգ․ իշխանութենէ որ պէտք եղած դիւրութիւնք ընծայուին յիշեալ թերթին, որպէս զի ապահովուի նորա հրատարակութիւնը և դիւրամատչելի լինի անձնիւր ուսուցչի և ուսանողի։

Իսկ ապագային համար,

Ա․ Ներկայել Ազգ․ իշխանութեան իղձ մը, այն է թէ յարմարագոյն ուսուցիչներէն և ուսումնարանաց յաջողագոյն շրջանաւարտներէն ընտրանօք մի քանիք յղուին յԵւրոպա՝ յուսումն մանկավարժութեան, և գրական կամ գիտական և կամ իմաստասիրական ճիւղերէ միոյն, պայմանաւ որ ի դարձին պաշտօնավարեն յազգ․ վարժարանս։

Բ․ Առաջարկել Ազգ․ իշխանութեան որ՝ վարժապետանոցի ուղղութիւն տայ Կեդր․ վարժարանի՝ նորա հիմնարկութեան նպատակին համեմատ։

Վաղուան նստին օրակարգի խնդիրներն են․

Ա․ Դաստիարակէն ի՞նչ բարոյական հանգամանքներ կը պահանջուին․»

Բ․ Լաւ դասաւանդութեան մը եղանակը։

Նիստը պիտի գումարի դարձեալ ճիշդ ժամը 6½ին։

ԱՆԱԿՆԿԱԼ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ

Առաւօտեան անոյշ քունը վայելողը միշտ կը զրկուի արտուտին և այլ զուարթ թռչնոց գեղեցիկ երգերէն ու դայլայլիկներէն, նոյնպէս և առաւօտները կանուխ այցելող բարեկամներէն։ Ես ահա նոյն դժբաղդութեան մէջ կը գտնուիմ։ Կանուխ ելնելն, այգուն, արևը չծագած, եթէ ոչ անկարելի, գէթ դժուարին բանը եղած է ինձ համար, բայց անակնկալ պատճառ մը երբ ստիպէ զիս ցնցել այդ մեղկ սովորութիւնը, ի հարկէ սրտի դառնութեամբ կը հնազանդիմ այդմ, ինչպէս պատահեցաւ ասկէ երկու շաբաթ առաջ։ Ժամը տասնըմէկն էր դեռ, դուռը կը բաղխեն. անշուշտ ես չեմ լսեր․ կը բացուի և ահա ծերունի մը, բայց շատ ծեր, քալելու անկարող, կարծես անթիւ դարեր գլխէն անցած․ դողդոջուն քայլերով սեամէն ներս դընելով երկու ոտքերն ալ՝ զիս կը փնտռէ, բայց այնպիսի ընտանի ձևով մը, որ մերայիններէ ոչ ոք կը խրտչի սորա յանդուգն ընթացքէն․ մանաւանդ շատ համակրելի կը գտնեն զինք և հիւրանոց կը հրաւիրեն․ իսկոյն կուգան արթնցնել զիս։ Ճիշդ քառորդ ժամ մը ըսպասցուցի զինք մինչև որ քովը կարենալ երթալու վիճակին մէջ գտնուեցայ։ Ծերունին, քիչ մ՚առաջ ըսածիս նման ծերունի մ՚էր, համակրելի և աւագելի։ Խոնջած ու պարտասած, սպիներ ճակտին վրայ, խոցեր ձեռքին ու երեսին վրայ․ ուր որ մերկ էր, ուր որ ազատ մնացած էր գոցող հանդերձներէ, որոշ կ՚երևէին կապոյտ մասեր, հարուածներ մարմնոյն վրայ, ամէն կողմը վերջապէս։

Առաջին հայեացքով մը զայս ամէնը տեսնելու կարող եղայ, այն ալ դիտելու վարժ աչեր ունենալուս համար։ Ալեւորն դեռ կը պահէր սակայն կնճիռներով ակօսացեալ ճակտին տակ վառ զոյգ մը աչեր, զորս ես գոնէ շատ հրապուրիչ կը գտնեմ… Հակառակ բազմաց կարծիքին, ի վերջոյ ըսածիս համեմատ։ Ոտք ելաւ զիս տեսնելուն և ես կարմրեցայ այդպիսի պատկառելի ծերունւոյ մը կողմէ այդչափ յարգանք տեսնելուս։

— Զիս չկրցիր ճանչել, այնպէս չէ՞, հարցուց անմնման քաղցրութեամբ մը։

— Ո՛չ, դժբաղդաբար, բայց ինձ կուգայ որ….։

— Այո՛, այո՛, քանի մը տարիներ յառաջ և երկար ատեն մնացինք միասին, զիս հիւրասիրեցիք ինձ արժանի պատուովք, և վըստահելով թէ բնաւ սրտով չպիտի թողուք զիս, հեռացայ և գործերուս գնացի։

Արդէն սոյն խօսքերն իմ գրկացս մէջ կ՚ըսէր հեզիկ ու վշտալիր սրտով․ ճանչցած էի զինքն, արտասուքներս կը թափէի իւր սպիտակ մօրուսին վրայ։

Այս ջերմ գիրկընդխառնումէն վերջ նըստանք ծունկ ծունկի, և սկսանք խօսիլ, բաց մտերմութեան նրբագոյն վարագոյրն․ ա՜հ, բայց մոռցայ, ձեզ ըսել թէ ո՞վ էր այս ծերունի մտերիմս… Տիար բարոյականն… բարեկամք, որ երկար ատենէ ի վեր բացակայ էր այսկէ․ իւր փոքրիկ մանուկները կը գտնուէին հոս, որ իրենց հօր գործը առանց դժուարութեան կը վարձեն, և տարւոյն մէջ քանի մը ամիսներ ալ օգափոխութեան կը կը պտըտին իրենց կրած յոգնութենէն հանգիստ առնելու համար։

— Ո՞ւր էիք մինչև ցարդ․ այնչափ նամակներ գրեցի Եւրոպիոյ ամէն կողմը և ոչ միոյն պատասխանը առացայ։

Ծերունին ցաւօք սրտի պատմեց թէ ժամանակէ ի վեր կեանքը անտանելի է դարձեր իրեն համար, ամէն տեղ հալածանք, ամէն տեղ զրկանք, վերջապէս շատ դառն օրեր, տարիներ է անցուցեր․— Եւ չե՞ս տեսներ, որչափ ծերացեր եմ քիչ ժամանակի մէջ։

— Այո՛, պատուական հայրիկ, այո՛, կ՚ափսոսամ իմ նմաններու շատերուն վրայ՝ որ ըղքեզ չեն ճանչցած ըստ արժանւոյն։ Բայց գոհ լինելու էք որ ամէն ոք ձեր վրայ կը խօսի, ձեր վրայ կը գրէ, ձեր վրայ կը քարոզէ…։

— Այլ ափսո՛ս, լեզուէն սրտէն մէկ մղոն հեռաւորութիւն ունի։

Աչերս վար առի ամաչելուս և վայրկեան մը լռութենէ վերջ, խօսակցութեան նիւթը փոխելով, կ՚ուզէ՞ք, ըսի, որ ձեր գալուստը ազդարարեմք թերթերու մէջ…։

—Ա՜հ, ոչ, ոչ, ոչ, աղաղակելով հակառակեցաւ, և բացաւ տետրակներն յորս շատ անուններ աւրած էր, և ի՞նչպէս, ցաւօք սըրտի, որոց տներէն վտարուած էր լրագրաց ցրուիչներու ոմանց պէս, որք դռներէն վըռընտուեցան անոր համար որ խոշորկեկ յաւելուած մը ներմուծած էին հաշւոյն մէջ։

Բաւական աղաչեցի, պաղատեցայ, թախանձանօք թախանձեցի որ քիչ մը ևս համբերութիւն ունենայ, չզրկէ իւր շնորհքներէն մեր շատ գիտցածները, ճանչցածները․ վերջապէս խոստացաւ ժամանակ մը մնալ մեզ մօտ, եթէ կարելի լինի նորէն կարգադրութիւն մը ընելու իւր հին բաժանորդաց հետ։ Այսպէս երկու ժամէ աւելի տեսակցութենէ մը ետքը բաժնուեցաւ ինձմէ՝ կրկին տեսութեան խոստում տալով։

Անցաւ շաբաթ մը, ոչ ինք երևցաւ, ոչ ես լուր մը կրցի առնել իրմէ։ Ճամբայ ելայ Թափառաշրջիկ՝ զինք փնտռելու։ Բաղդով Գաւըրգիւղի նաւն ինկայ․ ոչ ոք իւր վրայ կը խօսէր, ամէնն ալ անտեղեակ, ես ալ բերան չբացի և հասայ գիւղ։ Նաւամատոյցին վրայ մարդ մը տեսայ, անծանօթ, սակայն դէմքէն կարողացայ նշմարել որ այս մարդը ծերունի բարեկամիս ուր լինելը կրնայ գիտնալ և իւր վրայ տեղեկութիւն մը տալ։ Մօտեցայ քովը և հարցուցի։— Ա՛հ, բարեկամ, տեսայ, տեսայ զինքն, իմ ալ մտերիմն է, խօսեցանք հետը, և վայրկեանէ մը դարձեալ առջի ընթացքով վազեց սլացաւ այս գիւղէն, չունչը կըտրուած, չգիտեմ թէ ո՞ւր պիտի դառնայ։

— Ո՞ր կողմը, ո՞ր կողմը վազեց։

— Կարծեմ Օրթագիւղ կ՚երթար։

— Օրթագի՞ւղ…։

Ալ մտիկ չըրի, Օրթագիւղ վազեցի և տեսայ որ մարդը այն տեղ ալ բոյն չէ կրցեր դնել, թէպէտ՝ տեղացւոց պատմածին նայելով, ամէն տեղէ աւելի մնացեր է հոն։ Այսպէս յոգնած ու ծարաւցած, բնաւ ուրիշ տեղ չը փնտռելով այլ ևս զինք, հասայ տուն, և տեսայ որ այցետոմս մը գրեր էր ինձ հետևեալ իմաստով։

«Բոլոր Պոլիս շրջեցայ, կարծուածէն աւելի գործ կայ դեռ ժամանակ մը ինձ, գոհ եմ ձեր ունեցած բարի համարումէն ձերայնոց մասին․ առ այժմ կը մեկնիմ ուրիշ կողմ քիչ ժամանակի համար, յուսամ դարձիս իմ և քո յոյսեր տապալած չեմ գտնե՛ր։ Ց՚տեսութիւն։»

Աստուած տայ ըսի և այդ գիշեր անոյշ քուն մը քնացայ։

ՏԻՐ ԿԱԹԻՆ

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

Ի ՎԱՆՍ Ս․ ՆԱՐԵԿԱՑԻՈՅ

Ս․ Գրիգորի Նարեկացւոյ վանքն, քաղաքէս իբր 6—7 ժամ հեռաւորութեամբ դէպ ի հիւսիս-արևմուտք, կը գտնուի ընդարձակ դաշտավայրի մը կեդրոնը, բայց ոչ նորաշէն, զի իւր փլատակաց ներքև 800 տարիներու հնութիւններ կը բովանդակէ․ այժմ կայ մի փոքր մատուռ և զոհամատուցարան մ՚որ մէկ քանի տարի առաջ վերանորոգուեցաւ․ ունի ընդարձակ բակ մ՚ալ որմով պատապարեալ, որոյ մի կողմն կայ աղբիւր մը և միւս կողմէ արտօրէից միջև կը հոսի առուակ մը զով ու յստակ։

Վանքէն սակաւ ինչ վարը կը գտնուի Արակայ անուամբ գիւղն՝ 50—60 տուն թուրք —քիւրտ բնակչօք, որք կը պարապին երկրագործութեամբ և որոց մի մասը պանդխտութեամբ կը թեթևւի ի տար աշխարհ։

Նարեկացւոյն վարուց և բարուց վրայ աւելորդ է մեզ ճառել․ քանզի չկայ ազգային մը որ անգիտակ լինի նորա խստապահեաց ճըգնութեանն ու հրաշից զօրութեանն։ Ըստ աւանդութեան՝ կ՚ըսուի թէ, այս խստակրօն Հայրն փափաք յայտներ է տեսնել զԾխուս, և տեսեր է հետևեալ կերպիւ։

Ոչ սակաւ ժամանակէ հետէ Յիսուս ալ կամեցեր է փորձել զսէր Նարեկացւոյն, ուստի ծերոյ մը կերպարանօք, որ իբր թէ կը կրէ եղեր վէրք մ'ալ իւր քթին վրայ, երեւցեր է նմա ի ճանապարհին և ըսեր. Որդեա՛կ, պիտի երթամ այս ինչ տեղ, սակայն չեմ կարող այլ ևս յառաջանալ, քանզի խոնջեալ եմ ու պարտասած. կը խնդրեմ՝ վասն սիրոյն Քրիստոսի՝ բարձի՛ր զիս և տա՛ր. չէ՞որ Նարեկացին ալ Քրիստոսի սիրովն վառեալ էր, անմիջապէս ծերը իւր ուսոց վերայ բառնալով կը տանի անդ, ուր որ կը կամի ծերունին. բայց զարմանալին այն է որ ծերունին կ'ըսէ. Սխալ ըսի, ո՛չ թէ ատ՝ այլ սա ինչ տեղը պիտի երթայի. արդ, որչափ որ ձանձրութիւն է քեզ, զիս տա՛ր անդ։ Դարձեալ, վասն սիրոյն Քրիստոսի, մեծ համբերութեամբ իւր ուսոց վերայ կը տանի. յայնժամ ծերը կ'սկսի տառապիլ ըսելով, թէ վէրքին ցաւը սաստկացեր է, այլ ևս չէ կարող հանդուրժել, ուրեմն եթէ հնար է վասն սիրոյն Քրիստոսի ծծել վիրաւորեալ քիթն, որպէս զի ինքն հանգստանայ։ Նարեկացին մեծ սիրով յանձն կ'առնու և կ'սկսի ծծել վէրքէն արիւնախառն ջուր մը, ա՛յն է Տեառն մերոյ հրաշալից զօրութիւնն։ Ի վերջոյ ծերունին յայտնապէս կը ձայնէ. «Գրիգորիոս, ես եմ քո փափաքած Քրիստոսն, մեծ է սէրդ առ իս. ո՛վ ոք հաւատով դիմեալ դայ առ քեզ, առցէ զինդրուածս իւր. քանզի դու ես դեղ ամենայն ախտից և այսահարից», և կ'աներևոյթանայ։ Նարեկացին ի զուր հիացմամբ կ'որոնէ զնա...։

Թողումք այժմ աւանդութիւնն և յիշեմք պատմութիւնն որպէս իմացած եմք։ Նարեկացին Վանայ ծովուն Առտէր կղզւոյն մէջ տեսած է զՄայր Բարձրելւոյն՝ Ս. Աստուածածինն և իւր գիրկը միածին որդին Տէրն մեր Յիսուս Քրիստոս լուսափայլ կերպարանօք։

Նարեկացին իւր անդառնալի բարեխօսութեամբ բժիշկ է ամէն ցաւոց, մանաւանդ կուրաց, կաղաց, խլից, համերց և դիւահարաց. ըրած հրաշագործութիւնք խիստ շատ են զորս բարեպաշտ հաւատացեալք, մինչև իսկ քիւրաք և թուրքք, տեսած են և բժշկուած. շատ դիւահարներ, կոյրեր, անդամալոյծներ և այլն, և այլն, բժշկեր է, ցայս վայր կը բժշկէ. եթէ մէկը հաւատով դիմէ առ ինքն, կ'առնու իւր խնդրուածքը։

Մի քանի տարի առաջ քաղաքէս կարավանաց հետ կը դիմէ ի վանս Ս. Նարեկայ մի ոմն Թուրք՝ որուն աչքերն թէև բաց, սակայն զուրկ էին լուսոյ տեսութենէն. հաւատով կը մտնէ մատուռը և իւր ծնրադրութիւնը կը կրկնէ, հանդերձ լուսավառութեամբ, երբ որ կը կամի դուրս ելնել, յանկարծ աչքերը կը բացուին. և կ'սկսի ուրախութեան աղաղակ արձակել. ընդհուպ զոհ կը մատուցանէ և ամէն ուխտաւորք կ'սկսին արտասուաց հեղեղներով գոհութիւն մատուցանել։ Բայց որչա՜փ մեծ դժբաղդութիւն մեզ համար և քանի՛ցս ցաւալի որ այնքան տարիներէ ի վեր ամայի թողած եմք այս հրաշից սուրբ վանքը, այն Աստուածատես հօր վանքն ուր ջերմեռանդներ կը գտնեն ամէն ցաւոց դեղ և առողջութիւն, և ուր սակայն չեմք կարողացած ուխտաւորաց համար գոնէ մի քանի սենեակներ կառուցանել. նոքա կ'երթան վանքին բոլորտիքը բացօդեայ մնար մունր վրաններ կը կազմեն, կը նստին երեք չորս օր. վայելուչ է՞ այս։

Բաղաքիս հնաւանդ սովորութիւնն է տարին երիցս գնալ յուխտ սոյն վանքն մեծ բազմութեամբ Ա. ս. Լուսաւորչին, Բ. պայծառակերպութեան տօնի, Գ. Աստուածածնին, նոյպէս և շրջակայ քաղաքներէն և գիւղերէն։

Այս վանքը դիմելու համար ազգայինք սահմանած են (փափաքողքկարողն յամենայն ժամ) յիշեալ տաղաւարաց եօթնեկի պահոց ուրբաթ օրերն, գնալ և մնալ անդ երեք օր, այս երից աւուրց մէջ ուխտաւորաց ըրած խնդութիւնը և ուրախութիւնը կարելի չէ նկարագրել։

Զոհերու համար յաջորդ (շաբաթ) երեկոյ ոչխարք կը վենուին և գիշերը մեծ ուրախութեամբ և ցնծութեամբ կ'եփեն ցառաւօտ. առաւօտուն (կիրակի) մատաղը կը բաշխուի ուխտաւորաց և գիւղացւոց. յետ ժամերգութեան՝ քահանայն կ'օրհնէ ուխտաւորաց ընդունելութիւնը. հուսկ ապա սեղաններ կը պատրաստուին. բերկրանօք կուտեն կը խմեն և յետոյ կը դառնան. կը դիմեն այդ երեկոյ վանքէն 4—5 ժամ հեռի ջրեղեր մը քով որ կը կոչուի «Զաղըլ փուղարի». անդ կը մնան և յաջորդ (երկուշաբթի) օրը կանուխէն կը դիմեն քաղաքէս 1—1½ ժամ հեռի զով ջրոտ հովիտ մ'որ կը կոչուի «Գոթար». այդ տեղ վրան կը կազմեն և մեծ շքեղութեամբ նախաճաշիկ կ'ընեն. քաղաքէս ալ «առաջուր» ըսելով ընդ առաջ կ'երթան «ուխտդ ընդունական» ըսելու, և դոցա հետ ուրախութեամբ կը դառնան քաղաք։

Այս տարի ևս Ս. Լուսաւորչին և Վարդավառին ուղևորեցան բազում ուխտաւորք թէ՛ ի քաղաքէս և թէ՛ ի շրջակայից. կան նաև ուղևորք Աստուածածնին ալ։ Լուսաւորչին 200ի մօտ անձինք, և Վարդավառին ալ 2000ի չափ գնացին յուխտ որոնք եկեալ էին քաղաքէս, Արաբկիրէն, Տիվրիկէն և Բինկայ, Կամայ ու Նարվեր գիւղերէն։ Լուսաւորչին դիմող ուխտաւորաց կը նախագահէր Նարվեր գիւղի քահանայն. իսկ Վարդավառին ուխտաւորաց կը նախագահէին քաղաքիս Ս. Աստուածածին եկեղեցւոյ Աւագերէց Տ. Յովհաննէս հայրն և երկրորդ՝ Տիվրիկի քահանայն. շաբաթ առաւօտ պատարագեր է այս վերջինը, և կիրակի առաւօտուն՝ քաղաքիս Տ. Յովհաննէս Հայրն։

Յետ պատարագի արարողութեան, Ս. Նարեկացւոյն մասանց բացման հանդէսը կատարուեցաւ ի բժշկութիւն դիմող համայն ցաւագնելոց. յոյժ սրտառուչ էր տեսարանն. բարեպաշտ ուխտաւորաց սրտաճմլիկ ողբոց աղաղակներ գրեթէ արձագանգ կուտային Ս. մատրան չորս կողմը. դոցա հոսած հեղեղալի արտասուաց կաթիլներն կը թրջէին մատրան հողեր. ցաւագնելոց ըրած ճիչ և կոծ կը թնդացուցանէին մատրան պարիսպները. քահանայն բժշկութեան աւետարան ընթերցած ատեն, տեսնելով հաւատացելոց ողբերն, չէ կարող տոկալ, այլ իւր փափուկ յաչաց կը հոսէ արտասուքն մօրուսն ի վայր վասն բժշկութեան նոցա, որք իւրեանց խնդիրքը կ'ուղղէին առ Աստուած և առ Նարեկացին. քանիցս՝ հիանալի տեսարան. նոյն ժամուն որքան քարասիրտ մարդ ըլլայ, չը կրնար իւր արտասուք բռնել. յետ ամենայն արարողութեանց ահիւ և դողութեամբ կը համբուրեն Ս. մասունքն և կը մեկնին, շատերն բժշկուած։

Ակն, 14 օգոստ. 1891

ԳԷՈՐԳ ԱԽԵԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՄԸ

Այն խօսակցութիւնն որ տեղի ունեցած է Քրիստոսի և հարուստ երիտասարդի մը մէջ՝ իմաստն տարբեր կերպով մեկնողներ գտնուելով, յստակ և իսկութեամբ զայն ըմբռնելու համար, հմուտ կրօնագէտէ մը գոհացուցիչ բացատրութիւն մը տուրիլն յոյժ օգտակար դատելով, կը խնդրեմք մեր կրօնական Ս. Հայրերէն որ բարեհաճին տալ մեկնութիւնն։

Ղուկասու աւետարանին մէջ կը կարդամք. «Եւ ահա մատուցեալ ոմն առ նա, ասէ. Վարդապետ բարի, զի՞նչ բարի գործեցից՝ զի ընդունիցիմ զկեանս յաւիտենականս։ Եւ նա ասէ ցնա. զի՞ հարցանես զիս զբարւոյ, մի է բարի. եթէ կամիս ի կեանսն յաւիտենականս մտանել, պահեա՛ զպատուիրանսն։ Ասէ ցնա. զո՞րս։ Ասէ ցնա Յիսուս. զմի՛ սպանաներ՝ և մի՛ շնար, և մի՛ գողանար, և մի՛ սուտ վկայեր, պատուեա՛ զհայր քո և զմայր, և սիրեսցես զընկեր քո իբրև զանձն քո։ Ասէ ցնա պատանին. զայդ ամենայն պահեցի ի մանկութենէ իմմէ. արդ իւ՞ իւիք պակասիցեմ։ Ասէ ցնա Յիսուս. եթէ կամիս կատարեալ լինել, երթ վաճառեա զինչս քո և տուր աղքատաց. և ունիցիս գանձս յերկինս, և եկ զկնի իմ։ Իբրև լուաւ պատանին զբանն, գընաց տրտմեալ. զի ունէր ստացուածս բազումս։ Ասէ Յիսուս ցաշակերտսն. ամէն ամէն ասեմ ձեզ, զի դժուարաւ մտցէ մեծատունն յարքայութիւն երկնից։ Դարձեալ ասեմ ձեզ. դիւրին է մալեոյ մտանել ընդ ծակ ասղան քան մեծատան յարքայութիւն Աստուծոյ։

Մ. Տ. Ա.

ՄԱՄԼՈՅ ՆԵՐԲԻ

ՆՈՐ ԳԱՍԱԳԻՐՔ

ԹՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՑ

Յ. Գ. ՓԱԼԱԳԱՇԵԱՆ

ՄԱՍՆ Գ.

Կը պարունակէ, Կշռութիւն և համեմատութիւն. Երից կանոն. Շահու կանոն. Զեղչման կանոն. Միջին պայմանաժամու կանոն. Միջնորդչէք. հարիւրին այսչափ շահ կամ զընաս. Ընկերութեան կանոն. Խառնուրդ. Մետաղաց բաղադրութիւն. Բառակուսի և քառակուսի արմատ. Խորանարդ և խորանարդ արմատ. 500 է աւելի գործնական խընդիրք, և այլն, և այլն։

Գին 4 դրուշ

ՍԻՄՈՆ ԳԱԲԱՄԱՃԵԱՆ

ՆՈՐ

ԲԱՌԱԳԻՐՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ

Ցորում կը բովանդակին 30,000 բառք, ոճք, նորաբանութիւնք, գաւառական բառք, գիտականք, արհեստականք, դիցաբանականք, եւն, եւն։

Հրատարակուած է 15դ Թերթը։ Բաժանորդագինն է կանխիկ 15 դահեկան։

Դիմել առ հեղինակն,

ի Կ. Պոլիս, Էսկի Զապթիէ, Պէրպէրեան տպարան։

7)

ՄԵՌԵԱԼ ԿԻՆԸ

ՊԵՌՆԱՌԻ ՕՐԱԳԻՐԸ

Պերճօրէն կանգնեցաւ Թիկնաթոռին վրայ — և ճշմարիտ է ըսաւ — պարզապէս։

Ցեռայ մի քանի վայրկեան դիտեց զիս մինչ աչացս խորը։

— Էհ, ուրեմն, Պարոն, այն պատուոյն վրայ որ մասին այնքան հպարտ էք, մի՞թէ պիտի համարձակիք զիս վստահեցնել թէ եղբօր աղջկանս դաւանութիւնք ձեր վարքովը բնաւ փոփոխութիւն չպիտի կրեն, թէ ձեր խօսակցութեան սովորութիւնք, ձեր չարակամ այպանութիւնք, կամ նոյն իսկ ձեր ակամայ հեգնութիւնք այդ դեռատի սիրուն աղջկան վրդովում... և մինչ իսկ քր մը տարակուսանք չպիտի պատճառեն։ Կը կարծէ՞ք թէ նա կը հաւանի զինքն ենթարկել կամ թէ ես կը հաւանիմ զնա ենթարկել նմանօրինակ վտանգներու։

— Որոշապէս պիտի պատասխանեմ Ձեզ, Վերապատուելի Հայր, թէ ստահակ մը պիտի համարէի զանձս, եթէ կնոջս հաւատքը խղճի մտօք չը յարգէի։ Երբէք կրօնի առնչութիւն ունեցող խնդրոց վրայ ծաղրական բառ մը չրթներէս դուրս ելած չէ։ Թերահաւատ մ'եմ, ոչ թէ ամպարիշտ մը։ Ձեմ նախատած երբէք և չը պիտի նախատեմ զոր ինչ պաշտած եմ։ Քաջ կ'ըմբռնեմ թէ կարելի է որ մարդ իւր հաւատքը կորսնցնէ, այլ ինչ որ չեմ ըմբռներ, սա է թէ մարդ մը որ ի մանկութեան խաչին առաջ ի ծունր իջած է առընթեր իւր մօրն, յաւիտեան չը յարգէ այդ խաչին մէջ իւր մայրն և իւր մանկութիւնը։

Մի քիչ եռանդեամբ խօսեր էի, երէցին աչացը մէջ արտասուաց կաթիլներ կ'երևէին և կը խոստովանիմ թէ իւր յուզումն զիս առ ինքն ձգեց։

— Օ՜ն, Պարոն, ըսաւ ինձ քաղցրօրէն, ձեր կարծածին չափ յուսահատ չէք։ Սիրելի Ալիէթս մին է այն դեռատի ջերմակրօններէն որոց միջոցաւ հրաշքներ կը գործէ երբեմն Աստուած։

— Վերապատուելի Հայր, որքան ալ դառն լինի ինձ, այս վայրկեանիս երբ կ'զգամ թէ վերջապէս կը բանաք ինձ Ձեր սիրտը, ամէն ճշմարտութիւն կ'ուզեմ յայտնել... կրկին անգամ մը ես կ'ըսեմ Ձեզ թէ չեմ կամիր երջանկութիւնս ստախօսութեան պարտիլ։ Կ'ուզեմ Ձեզ խոստովանիլ թէ մի քիչ առաջ յակամայս ականջիս հասան մի քանի խօսքեր Ձեր եղբօր աղջկան, օրիորդ Ալիէթի, ձեզ հետ ունեցած խօսակցութենէն։ Կարծեցի ըմբռնել, և այժմ կը կարծեմ առաւել ևս ըմբռնել թէ զիս հաւատքի բերելու, ի մի բան, զիս ի դարձ կոչելու յոյսն պիտի լինի այն միակ պատճառն որ Ձեր երկուքին ալ հաւանութիւնը պիտի կարենայ որոշել... լաւ ուրեմն, Վերապատուելի Հայր, ըսի Ձեզ զոր ինչ պէտք չէ Ձեզ երկմտութեան տեղի տայ, նմանապէս պիտի յայտնեմ Ձեզ զոր ինչ պէտք չունիք յուսալ յինէն։ Կ'զգամ թէ յաւէտ ջնջուած են յիս գերբնական դաւանութիւնք, թէ նոցա արմատներն իսկ կորնչած են, թէ վերջապէս չկայ ժայռ մը Կարմիր ծովուն մէջ որ առաւել անընդունակ լինի բուսաբերութեան քան իմ հոգիս հաւատոյ ամէն սերմի։

— Քանի որ այդպէս կը մտածէք, Պարոն, պատասխանեց երէցը, պատշաճ է Ձեզ ըսել թէ... բայց Աստուծոյ միջոցներն բազմաթիւ են։

Ցոտին կանգնեցաւ։

— Որդեակ իմ, յարեց ծանր ձայնով, ահա կը վերջացնեմ մեր սուրբ պապերէն մեզի մէկ խօսքովը։ — Ծերունւոյ մ'օրհնենքը չկրնար երբէք չարիք հասցնել... կը կամի՞ք իմ օրհնութիւնս ընդունիլ։

Մինչ գետին խոնարհեցայ։

Օդին մէջ գծեց խորհրդաւոր նշաններն։ Կրկին ողջունեցի զինքը և հեռացայ։

Մինչդեռ դուրս կ'ելնէի, վերստին կոչեց զիս.

— Պարոն տը Վօտռիգուռ, մի մեկնիք, հաճեցէք պարտէզն սպասել մեզ։

. . . . . .

Հոս կը վերջանայ սոյն օրագիրը և վերջ կը գտնէ միանգամայն կենաց այն մասնաւոր տագնապն որ թելադրած էր զիս զայն ի գիր առնելու գաղտիարը։ — Օրիորդ տը Գուռթհէօզ իւր ընտանեաց հաւանութեամբ կը հաճի շնորհել ինձ իւր ձեռքը։ Խորին երախտագիտութեամբ կ'ընդունիմ զայն. ամէն ջանք ի գործ պիտի դնեմ որպէս զի կինս լինի երջանիկ, որպէս է սիրեցեալ, պատուաւոր և գեղանի։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Պեռնառ դերակոմսի օրագիրը չէր վերջացած որպէս ինքը կ'ենթադրէր, այլ դադրած էր այն՝ ժամանակուան մը համար։ Պարոն տը Վօտռիգուռ զայն գրել պիտի վերսկսէր մի օր՝ ճգնաժամու մ'աղդեցութեան ներքև, ոչ նուազ հաւասար այնմ որ նախապէս բռնադատած էր զինքը գրիչ ձեռքն առնուլ։

Բազմաթիւ տարիներու միջոց մը իրարմէ կը զատէ սոյն երկու մասերն, կամ առաւել ճիշդը, Պեռնառի օրագրոյն երկու հատակագրները։ Մեր անձնապէս յիշածներուն և մի քանի ընտանեկան յիշատակագրոց շնորհիւ, պիտի ջանամք սոյն բացը լրացնել։

Տը Վօտռիգուռ դերակոմսին նկատմամբ անիրաւ պիտի լինէինք, եթէ բառական իմաստով ընդունէինք այն նկարագիրը զոր անձամբ գծած է վերոյգրեալ էջերուն մէջ։ Սակայն հակառակ նկարչին քմածին չափազանցութեանց և ակներև արուեստականութեան, ընթերցողն ըստ բաւականին պիտի որոշէ նմանութիւնը։ Պիտի ըմբռնէ թէ այն ժամանակին յորում Վօտռիգուռի դերակոմսն յարաբերութեան մէջ մտաւ Գուռթհէօզի ընտանեաց հետ, մի միայն հազիւ հանդուրժելի սինլքոր և ծաղրածու երիտասարդ մը չէր, ինչպէս որ յօժարակամ ինքզինքը ներկայացնել կը ջանայ։ Այլ յատկութիւնք ևս պէտք էին, բացատրելու համար այն ազդեցութիւնը զոր Պ. տը Վօտռիգուռ ներգործեց օրիորդ տը Գուռթհէօզի բնաւորութիւնն ունեցող աղջկան մը վրայ։ Ոչ ոք կը տարակուսի արդարև թէ օրիորդ Ալիէթ, իբրեւ կին, թէև իւր սեռին ընտրելագոյն դասին վերաբերեալ, հիացած չլինի Պեռնառի արտաքին փայլուն երևոյթէն, և հրապուրուած չլինի ուրիշ ո՛և է աղջկան նման նորա անձնական պերճ և գեղաշուք կենցաղավարութենէն։ Բայց տարակուսելի է նաև թէ, եթէ այս արտաքին հանգամանքներն, յանձին սոյն երիտասարդին, ճշմարիտ և հաղուագիւտ հիման մը վրայ հաստատուած չը լինէին, կնոջին այս առաջին հետաքրքրութիւնը շուտով անտարբերութեան և արհամարհանաց պիտի փոխուէր օրիորդ տը Գուռթհէօզի մօտ։ Օրիորդ Ալիէթ նախ զարմացած և յափշտակուած էր պարզ քաղաքավարութենէ մը որ չէր սպասուեր նմանօրինակ յաղթականէ մը։ Քանզի այդ ազնուական և նորատի Պեռնառը, որ իւր առանձնական կենաց մէջ չափէն աւելի լպիրշ է, ընկերութեանց մէջ կը կրէր տեսակ մ'անինքնագէտ պչրողութեամբ յոյժ բարեկիրթ և մինչ իսկ պարկեշտ ընթացք մը և խօսակցութեան սա մը, հանդերձ այն հեշտ մեղկութեամբ որ իւրաքանչիւր բնութեան կը խոնարհի, և այն գգուասէր քաղցրութեամբ զոր այնքան հաճոյ է տեսնել հզօր անձանց քով։ Բայց ասոնք, մշակեալ մտքի տէր անձ մ'էր նա, ամէն բանի տեղեակ և որոյ մտաց բոլոր հատուածակողմներն հաճոյալի ճաճանչներ կ'արձակէին, երբ այս ախորժելի թուէր իրեն։ Վերջապէս մարդ կ'զգար ի նա խրախոյս, մեծանձն և ուղղախոհ ոգի մը, անհաշտ թշնամի թիւր գործոց, արդարև գեր ի վերոյ բնաւորութեան տէր անձ մը։ Սոյն օրինակ հոգւոյ մը փրկութիւնն և առ Աստուած դարձն հզօր փորձութիւն մ'էր՝ ոգւով չափ հաւատացեալ քրիստոնեայ աղջկան մը մտացը վրայ։

Այս եղաւ արդարացումն օրիորդ տը Գուռթհէօզի՝ Պեռնառի նկատմամբ զգացած համակրութեան, որոյ մասին իւր սիրտն, թերևս առաւել քան զիւր բանականութիւն հաւանութիւն ցոյց կուտար։ Այս եղաւ նաև, որպէս Պարոն տը Վօտռիգուռ քաջ ըմբռնած էր Ալիէթի հօրեղբօր, արժանաւոր եկեղեցականին, տուած արդարացումը, հաստատելու համար իւր ունեցած սէրն եղբօրաղջկանը վրայ զոր յանչափս կը պաշտէր։

Երկոքին ևս, ինչպէս կ'ըսէր բարեսիրտ երէցը, երկու յափշտակեալ հոգիներ էին, երկու բորբոքեալ երևակայութիւններ —և ժամանակակից եկեղեցականաց— և լաւագոյններու մէջ իսկ, մենէ ո՞վ ճանչցած չէ այսքան եռանդոտ սրտի տէր անձ և այսքան սրբապէս վիպային և կրօնասէր հոգւոյ տէր կիներ— թող պարտաւէ զայնս ո՛ոք կամի։ Մեզ համար, մեք կը սիրեմք և կը յարգեմք աւիւնը, նոյն իսկ երբ մոլորել թուի այն, թէև հաստատութիւնը այդ կողմը չը միտիր։

(Շարունակելի)

ԱՆԳԼԻՈՑ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՆ ՓԵՏՐՈՒԱՐ ԱՄԻՍԸ

—

Ներկայ տարւոյ փետրուար ամիսը, ի Մեծն Բրիտանիա զարմանալի երևոյթով մը ներկայացած է։ Անգլիացիք գիտեն թէ մանաւանդ փետրուար ամսոյն մէջ, մառախուղներն այնչափ խիտ կը լինին որ մօտակայ առարկայքն իսկ շատ դժուարութեամբ կարելի է տեսնել։ Թէև այս տարւոյ փետրուարի մառախուղներն ևս նոյնչափ անթափանցիկ եղած են՝ մանաւանդ ամսոյն երկրորդ կիսոյն մէջ, սակայն Meteorological officeի միջոցաւ հրատարակեալ վիճակագրեր նորօրինակ երևոյթ մը կը յայտնեն, այն է թէ ամսոյն երկրորդ կիսոյն մէջ մանաւանդ, արեգակը համեմատաբար չափազանց երկար ժամանակամիջոցներով երևցած է։

Հետևեալ ցուցակին վրայ ակնարկ մը նետելով կ'իմանամք արևու տեսնուած ժամերուն միջին տևողութեան և փետրուարինին մէջ եղած այն մեծ տարբերութիւնը։

Երկիրք	Արևու տեսնուած ժամերուն թիւը Միջին	1891	փետր.	Մինչին վրայ փետրուարի ունեցած առաւելութիւնը
Մանչի կղզիք	89	167		88 %
Անգլիա	65	104		60 %
Իռլանտա	72	78		8 %
Հս. Սկովտիա	46	54		17 %

Ինչպէս այս ցուցակէն կ'երևի, Իռլանտա մեծ բաժին մը չունի արեգական լուսոյն այս առաւելութենէն, և սակայն ի Տըպլին տեսնուած 81 և Սրմակ (Իռլանտա) քաղաքին մէջ տեսնուած 73 ժամերն առաւելութիւն մը կը ցուցնեն, մին 22 և միւսն 12 ժամ։

Թէև Սկովտիոյ համար առ հարիւր տըրուածն համեմատաբար աւելի է, սակայն մի միայն այս երկրի արևմտեան մասանց մէջ սովորականէն նուազ արժէք մը յառաջ բերած է։ Ի Կլասքով, արեգակնային լուսոյ ամբողջ տևողութիւնը 34 ժամ եղած լինելով, միջինէն 12 ժամ նուազ կը լինի։

Ինչպէս որ ըսուեցաւ, փետրուարի երկրորդ մառախլապատ կիսոյն միջոցին է որ արևու լուսոյն տևողութեան և միջին արժէքի մէջ, առաւելութեան զարմանալի տարբերութիւն մ'երևցած է։

Թէև փետրուարի առաջին շաբթուան մէջ արձանագրեալ թիւերն, 12 երկրաց 8ին, և երկրորդ շաբթուն իսկ 4ին մէջ սովորականէն նուազ էին, սակայն մնացեալ 14 աւուրց միջոցին, արևու լուսոյն տևողութիւնը խիստ զգալի կերպիւ աւելցած է։

Առօրեայ միջին հաշուոց բաղդատութենէն կ'երևի թէ փետրուարի առջի կիսոյն մէջ ի Ժէլսբրթօն արեգակը ժամ մ'աւելի փայլած է, և 3 ժամ աւելի Մանչի կղզեաց վրայ։ օրական այս յաւելումը 2 և 4 ժամերու բարձրացած է վերջին երկու շաբաթներու միջոցին։

Meteorological office կը յայտնէ թէ ամսոյն առջի կիսոյն մէջ արեգակը ի Լոնտոն 18,9 ժամ և երկրորդ կիսոյն միջոցին 23 ժամ տեսնուած է, գումար 41,9 ժամ,— որչափ որ ալ տկար, սովորականէն 5 ժամ աւելի է այս։ Կրինիչի Կայսերական Դիտարանին մէջ, փետրուար 1—14, արեգակը 24,2 ժամ տեսնուած է, և մնացեալ 14 աւուրց միջոցին 46,5 ժամ, գումար 70,7 ժամ։ Կրինիչի համար փետրուարի մէջ միջին արժէքը 42 ժամ լինելով, 29 ժամի առաւելութիւն մը կը նշանակէ։ Ամբարուի, օրը գրեթէ ժամ մը։(1)

Լոնտոնի բնակիչք փետրուարի մէջ թէև արեգակնային լուսոյ առաւելութիւն մը վայելեցին, այսու հանդերձ անկարելի է որ չը նախանձին մայրաքաղաքին մառախուղներէն ազատ տեղերու։ Ապէրտին՝ (Սկովտիա) որ իւր ալ աւելի հիւսիսային դրից պատճառաւ պէտք էր որ շատ քիչ անգամ տեսնէր արեգակը, Լոնտոնի արևմտեան մասէն երեք անգամ աւելի ժամանակամիջոցով տեսած է։

Գիտեմք թէ Բրիտանական Կայսրութեան մայրաքաղաքին անհուն մառախուղին անթափանցկութիւնը կը վերագրուի ծուխի այն մեծ քանակութեան զոր քաղաքը իւր մթնոլորտին մէջ միշտ կ'ունենայ։ Այս խնդրոյ լուծման համար Պ. Ուիթ ամբողջ ամիս մը, 1890 նոյեմբեր 29էն մինչև դեկտեմբեր 27, 0,2 քառակուսի մէթր գետնի վրայ ինկած ճիւնը հաւաքելով 13 սանթիկրամ ծխանի մուր ժողվեց։ Լոնտոնի տարածութիւնը, ըստ Տարեգրի Երկայնութեան Սենեկին, 305 քիլոմեթր քառակուսի լինելով, դիւրութեամբ կը գտնեմք թէ կարելի պիտի լինի 991 տակառաչափ ծխոյ մուր ստանալ քաղքին վրայէն։

Այս ահագին քանակութիւնը տարբեր կերպերով ևս կարելի է բացատրել. գետնատուխով գործող վակոնի մը միջին տարողութիւնն է գրեթէ 10,000 քիլոկրամ. ուրեմն 99 վակոններ պէտք են, ամուսան մը միջոցին Լոնտոնի վրայ հաւաքեալ ծխոյ մուրը փոխադրել կարենալու համար։ Գիտեմք թէ գործաւորաց ձեռքի կառքին բեռը կը հաւասարի մէկ խորանարդ մէթրին երեսներորդ մասին. այսպէս փոխադրելի հոգին միջին խաութեան համար 2,5 ընդունելով, կը տեսնեմք թէ այս պայմանաց ներքև կառքի մը բեռն 83 քիլոկրամէ քիչ մ'աւելի կը լինի, և այս թիւը 991 տակառաչափ ծխոյ մուրին հետ համեմատելով, կը գտնեմք թէ վերցընելու գործողութեան պէտք է որ 11897 մարդ աշխատին։

Իւրաքանչիւր ոք նշմարած է թէ ծխոյ մասնիկները—մուր— չափազանց թեթև լինելով, գործարանաց ծխնելոյզէն ելնելով օդին մէջ տարածուելն վերջը կամաց կամաց հողին վրայ կը դիզուին. ընդունելով որ քարսոնի այս փոշիներուն խաութիւնը լինի 0,1 (ջուրինը 1), յայնժամ 991 տակառաչափը 9,910 մեթրի ծաւալ մը պիտի ունենայ. այս ծաւալով կարելի է 6մ,49 տրամագծով էյֆէլի աշտարակէն աւելի բարձր կոթող մը կանգնել։

Լուսանկարն ևս գաղափար մը կուտայ մեզ Լոնտոնի մառախուղներուն անթափանցկութեանը վերայ։ Փետրուարի մէջ լուսանկարի արտադրութիւն մը ստանալու համար գրեթէ 1½ ժամ պէտք է, եթէ արեգակն երեւի. իսկ երբ մառախուղը չափազանց լինի, այս ժամանակամիջոցը միջին հաշուով չորս ժամը կ'անցնի։

Անթոպ Թարգմ. ԹԱԹՈՒԼ ՓԻՒՐԷԼԵԱՆ

(1) Տիեզերական ժամ մը ընդունելու համար պէտք եղած միջօրէականի և դիտարանի ընտրութիւնն անորոշ է տակաւին. արդէն Վաշինկթօնի ժողովը, իւր մթնոլորտին վիճակն ի մէջ բերելով, զՌարիզ անյարմար դատեց։ Երկու ամիս յառաջ, Պ. Թոնտինի Դիտութեանց Ակադեմիային կը տեղեկագրեր թէ Կրինիչի մթնոլորտն բոլորովին դէշ վիճակ մ'ունի, քանի որ արեգակը 1886ին հոն փայլած է 1229 ժամ, 87ին 1407 ժամ և 88ին 1068 ժամ. նաև հոն 86ին 163 օր, 87ին 143 օր, և 88ին 165 օրեր անձրև տեղացած է։ Պ. Թոնտինի՝ տիեզերական ժամ մը ընդունելու համար պէտք եղած ամենայարմար միջօրէականը Երուսաղէմինն է կ'ըսէ։ ԾԱՆ. ԹԱՐԳ.

---

7) ՇԷՅՔՍՊԻՐ

—

ՎԵՆԵՏԿՈՅ ՎԱՃԱՌԱԿԱՆԸ

—

ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

—

ՀԱՆԴԷՍ Բ.

ՏԵՍԻԼ Գ.

Վենետիկ.— Սենեակ մը Շայլօքի տան մէջ.

(Մտնեն Եսիգա եւ Լանչէլօ։)

Եսիգա.— Կը ցաւիմ որ այսպէս կը լքես հայրս. մեր տունը դժոխք մ'է և դու, զուարթ սատանայ, մի քիչ կ'ոգեւորէիր ձանձրոյթի մթնոլորտը։ Ինչ և իցէ, ողջ եղիր, ահա՛ տուքաթ մը քեզ։ Այս երեկոյ, ընթրիքին, Լանչէլօ, Լօրէնցօն պիտի տեսնես, որ նոր տիրոջդ հիւրն է. այս նամակը իրեն տուր, բայց ծածուկ, և երթաս բարով, չեմ ուզեր որ հայրս տեսնէ քեզ հետ խօսիլը։

Լանչ.— Մնաս բարով, փոխանակ լեզուիս՝ արցունքներս կը խօսին։ Զքնաղագեղ հեթանոս, հեշտանոյշ Հրէուհի, մնաս բարով, թէ որ մէկը զքեզ չխարէ առևանգելու համար, ըսել է ես խաբուած եմ, բայց մնաս բարով, այս յիմար արցունքներս քիչ մը չատ կը մարեն առնական կորովս. մնաս բարով։

Եսի.— Երթաս բարով, բարի Լանչէլօ. (կ'ելնէ Լանչէլօ)։ Ա՜հ, ի՞նչ գարշելի մեղք կը գործեմ ամչնալով հօրս աղջիկն ըլլալուս՝. թէպէտ իւր աղջիկն եմ արեամբ, այլ բնաւորութեամբ ո՛չ։ Ո՜հ, Լօրէնցօ, թէ չթերանաս խօսքիդ, վերջ պիտի տամ այս կուռոյն՝ ըլլալով քրիստոնեայ և քո սիրելի կինը։ (Կ'ելնէ)։

ՏԵՍԻԼ Դ.

Վենետիկ. — Փողոց մը։

(Մտնեն Կրասիանօ, Լօրէնցօ, Սալանիօ եւ Սալարինօ։)

Լօրէնցօ. — Էյ, ընթրիքի ժամը պիտի փախցնենք, իմ ընկերներս մէջ ծպտինք և մէկ ժամէն ամենքս ալ դառնանք։

Կրա. — Լաւ չորոշեցինք մեր ընելիք պատրաստութիւնը։

Սալար.— Ջահակիրներու մասին ալ դեռ բան չխօսեցանք։

Սալան.— Այդ բան չէ, բաւական է որ շատ աղէկ կարգադրուած ըլլայ. իմ կարծեօք՝ ատով չզբաղինք։

Լօրէն.— Դեռ ժամը չորսն է, երկու ժամ ունինք պատրաստուելու։

(Մտնէ Լանչէլօ, նամակ մը ձեռքը։)

Լօրէն.— Բարեկամ Լանչէլօ, ի՞նչ լուր։

Լանչ.— Եթէ հաճիր պատռել սա թուղթը, իմաստը կ'իմանայիր։

Լօրէն.— Կը ճանչեմ ձեռքը. արդարեւ գեղեցիկ ձեռք մը, և ձեռք մը աւելի ճերմակ քան այն թուղթը որոյ վրայ գրած է։

Կրաս.— Սիրային լուրեր անպատճառ։

Լանչ.— Ձեր հրամանաւ, Պարոն...։

Լօրէն.— Ո՞ւր կ'երթաս հիմա։

Լանչ.— Տէր ողորմեա, կ'երթամ իմացընելու Հրեայ հին տիրոջս գալ ճաշելու քրիստոնեայ նոր տիրոջս հետ։

Լորէն.— Կեցի՛ր քիչ մը, ա՛ռ ասիկայ, ըսէ գեղադէմ Եսիգային թէ չպիտի պակսիմ, բայց գաղտնի ըսէ իրեն. գնա՛ Պարոն։ (Լանչէլօ կ'ելնէ) Պարոններ, կ'ուզէ՞ք պատրաս-

տուիլ, այս իրիկուան դիմակաւորման ես ջահակիր մը գտայ։

Սալար.— Այո՛, ես ալ երթամ պատրաստուելու։

Սօլան.— Ես ալ։

Լորէն.— Եկէք ժամ մը վերջ զիս և Կրասիանօն իւր տունը գտնել։

Սալան.— Այդպէս լաւ է։ (Կ'ելնեն Սալարինօ և Սօլանիօ։)

Կրաս.— Այդ նամակը գեղեցիկ Եսիգայէն չէ՞ր։

Լօրէն.— Ի հարկէ ամէն բան պէտք եմ ըսել քեզ. ինծ կ'իմացնէ թէ ինչ եղանակաւ զինք իւր հօր տնէն պէտք եմ առևանգել։ Հետը առած է ոսկի, գոհար, և մանչ սպասաւորի հագուստ հայթայթած է իրեն։ Եթէ երբէք իւր հայրը, Հրեայն, երկինք երթայ, ի սէր իւր ազնիւ աղջկան պիտի եղած ըլլայ, և եթէ չար բաղդն դարձեալ արգելք մը հանէ Եսիգայի ոտիցն առջև, միայն ներելի կրնայ ըլլալ ըսելն թէ նա անհաւատարիմ Հրէի մը աղջիկն է։ Օ՛ն, եկուր հետս, ճամբան աչքէ կ'անցնես այդ տոմսակը։ Գեղանի Եսիգան իմ ջահակիրս պիտի ըլլայ։ (Կ'ելնեն)։

ՏԵՍԻԼ Ե.

Վենետիկ—. Շայլօքի տան առջեւ.

(Մտնեն Շայլօք եւ Լանչէլօ)

Շայլօք.— Լա՛ւ, պիտի տեսնես, աչերդ թո՛ղ դատաւոր ըլլան տեսնելու ծերունի Շայլօքի և Պասանիօի տարբերութիւնը.— Հէ՛, Եսիգա —իմ տանս պէս հոն չպիտի կըրնաս տիկիլ որկրամոլութեամբդ, — Հէ՛ Եսիգա— ո՛չ քնանալ, ո՛չ խորդալ, ո՛չ զգեստներդ պատռել — Հէ՛, Եսիգա, քեզ կ'ըսեմ։

Լանչ.— Հէ՛, Եսիգա։

Շայլ.— Ո՞վ հրամայեց քեզ որ կանչես. քեզ հրաման չըրի կանչելու։

Լանչ.— Ձեր Մեծապատուութիւնը կը յանդիմանէր զիս առանց հրամանի բան մը չկարենալ ընելուս համար։

(Մտնէ Եսիգա)

Եսիգա.— Զի՞ս կը կանչէք, ի՞նչ կ'ուզէք։

Շայլ.— Ճաշի հրաւիրուած եմ ես, Եսիգա, ահա բանալիներս։— Բայց ինչո՞ւ պիտի երթամ. սրտանց չէ որ զիս կը հրաւիրեն, զիս շողոքորթել կ'ուզեն։ Պա՛հ, ատելութեամբ պիտի երթամ, միայն այդ շռայլ քրիստոնէին սեղանէն ուտելու համար։ Եսիգա, աղջիկս, հսկէ տանը։ Շիտակը ակամայ պիտի երթամ. բան մը պիտի ելնէ հանգստութեանս դէմ, որովհետև այս գիշեր պարկերով ստակ տեսայ երազս։

Լանչ.— Կը խնդրեմ, տէր, եկէք, երիտասարդ տէրս ձեր բարի գալստեանը կ'սպասէ։

Շայլ.— Ես ալ իրենին։

Լանչ.— Մէկմէկու հետ խնդրոյ ելան... չպիտի ըսեմ թէ դիմակաւորներ պիտի տեսնէք, եթէ մէկ հատ տեսնէք. առանց պատճառի չէր որ քիթս արիւնեցաւ անցեալ սեւ երկուշաբթին, առաւօտեան ժամը վեցին, որ այս տարի ճիշդ մոխրոցի չորեքշաբթին կը պատահի, չորս տարի է, կէս օրէն վերջ...։

Շայլ.— Ի՞նչ, դիմակաւո՞րներ կան.— մտիկ ըրէ՛, Եսիգա, փակէ դռներս, և երբ թմբուկի ձայն լսես կամ անճահ լալիկները գըլխըլոր սրինգի, մի՛ ցատկեր պատուհանը և գլուխդ դուրս երկնցներ տեսնելու քրիստոնեայ խենթերը լերկածոյլ դիմակներով.

այլ խփէ տանս ականջները, պատուհաններն ըսել կ'ուզեմ. մի՛ թողուր մտնել իմ լուրջ տան մէջ զեղխութեանց անմշան աղմուկներն։ Կ'երդնում Յակոբի գաւազանին վրայ թէ բնաւ կամք չունիմ այսօր խրախանալու. բայց սակայն պիտի երթամ։ Առաջ անցիր, սատահակ, ըսէ որ կուգամ։

Լանչ.— Այդպէս պիտի ըսեմ, տէր, (ցած, Եսիգայի) Տիրուհի, պատուհանէն նայեցէք հակառակ իւր հրամաններուն։

Քրիստոնեայ մը պիտի տեսնէք անցնելուն

Շատ արժանի Հրէուհւոյ մը աչերուն։

(Կ'ելնէ)։

Շայլ.— Ի՞նչ կ'ըսէ Ակարի այս ախմար տղան, հէ՛։

Եսիգա.— «Մնաս բարեաւ Տիրուհի» կ'ըսէր ինծ, ուրիշ ոչինչ։

Շայլ.— Զարաճճին գէշ տղայ չէ բնաւ, բայց սարսափելի կ'ուտէ, խլունջի նման ալ դանդաղ է գործի մէջ, օրուան մէջ վայրի կատուէ մ'աւելի կը քնանայ. ծիսատացները բան չունին իմ փեթակիս մէջ։ Այսպէս կը բաժնուիմ իրմէ և կը բաժնուիմ ի նպաստ մարդու մը որոյ սա կ'օգնէ սպառելու իրեն փոխ առուած գումարս։ Ալ ներս մտի՛ր, Եսիգա, թերևս անմիջապէս դառնամ, ինչպէս որ ըսի, այնպէս ըրէ. դռներն վրադ գոցէ։ Լաւ գոցողը լաւ կը գտնէ, ահա առած մը՝ տընտեսագէտ մտքի մը համար միշտ գործածելի։ (Կ'ելնէ)

Եսիգա.— Երթաս բարեաւ. եթէ բաղդս չհակառակի, ես հայր մը, դու աղջիկ մը կորուսինք (Կ'ելնէ)։

(Շարունակելի) Թարգ. Ա. ՀԱՄԲԱՐԴԱՐԲԹԱՆ

ԸՆԴ ՄԱՄԼՈՎ

ԱՌՏՆԻՆ

ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅՕՐԻՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

(Երես 320, Գին 8 դահեկան)

Բազմարդիւն Հեղինակին գրչէն ելած այս եղական գործ իրաւամբ կը կրէ յինքեան կատարելութեան դրոշմն, այնպէս որ ընդ հուպ Հայ օրիորդք պիտի ունենան ընտիր դաստիարակութեան ուղեցոյց մը, որ պիտի աւանդէ հրապուրիչ ոճով Առտնին Տնտեսութեան կարևոր դասերն։

Դիմել Կ. Պոլիս, Էսկի Զապթիէ փողոց, Պէրպէրեան Տպարան։

ՄԵԶՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՅ

Տասներորդ եօթներորդ տարի

—

Վարժարանիս նոր շրջանն սկսաւ անցեալ երկուշաբթի օր սեպտեմբեր 2։ Աշակերտուհեաց ընդունելութիւնք տեղի կունենան նոյն օրէն ի վեր. դասախօսութիւնք կանոնաւոր կերպիւ կ'սկսին ամսոյն 9ին։

Նոր աշակերտուհի տալու փափաքողք կը հրաւիրուին առաւօտներն ի վարժարան յիճաւիլ, ուր կը գտնուի

20 Օգոստ. 1891 Հիմնադիր-Տնօրէն

Իւսկիւտար Մ. Ս. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կառավարչական. — Պրուսայի Նահանգին կուսակալ անուանեցաւ Մինիր փաշա, նախորդ նախարար Ներքին գործոց։— Խարբերդի Զարսանճաք գաւառակին գայմագամ անուանեցաւ Լութֆի էֆէնտի, գայմագամ Բախի։— Նոյն նահանգին Բախ գաւառակին գայմագամ անուանեցաւ Խալիլ Րահմի էֆէնտին, գայմագամ Զարսանճաքի։— Նոյն նահանգին Հիւսնիմանսուր գաւառակին գայմագամ անուանեցաւ Ահմէտ Րէշիտ պէյ, գայմ. Ակնայ, իսկ Ակնայ գայմ. անուանեցաւ Մուսթաֆա Սապրի էֆէնտի, գայմագամ Հիւսնիմանսուրի։— Ամասիոյ գաւառին թըղթակցութեանց տնօրէն անուանեցաւ Հիլմի պէյ, թղթակցութեանց տնօրէն Տրամայի, և իրեն յաջորդեց Ահմէտ Սըրրի էֆէնտի, թըղթակցութեանց տնօրէն Ամասիոյ։— Տիգրանակերտի նահանգին մարդահամարի վերատեսուչ անուանեցաւ Պէհճէտ պէյ։

— Ձեռնարկներ կը լինին Ադրիանուպոլսոյ ու Տէտէ աղաճի երկաթուղւոյն յարմար մէկ կէտէն մինչև Սելանիկ եւս երկաթուղի մը շինելու։

— ՅԱնդրիանուպոլիս անցեալ շաբաթ գիշեր հրդեհ ծագելով, 23 փայտաշէն խանութներ այրեր են։

— Կղզիներու Իսարէի ժողովին անդամ արգուած են Գարամանեան Յարութիւն, Թավուգճը օղլու Յարութիւն և Եագօմի Գալֆա էֆէնտիք։

— Անգլիական Տէրվէնդ շոգենաւն երկուշաբթի օր Գարաքէօյի կամուրջին զարնուելով, բաւական վնաս պատճառեց և ինքն ալ վնասուեցաւ. անցուդարձը մէկ քանի ժամ անկարելի եղաւ։

— Ի Տիգրանակերտ դրամանենգներու ընկերութիւն մը գտնուեր է. ձերբակալուեր են Կարապետ, Սարգիս և Յարութիւն անուն դրամանենգները և իրենց ընկերները կը փնտռուին։

— Ըստ Մօնիդէօրի, Վեհ. Սուլթանը 30 000 ղրշի ամսական շնորհած է նախորդ Մեծ-Եպարքոս Քեամիլ փաշային։

— Սամանճը Ապտուլլահ էֆ. և ընկերք մենաշնորհ ստացած են Այտընի նահանգին մէջ գտնուած Մէնտար գետը նաւարկելի և շուրջը գտնուած ճահիճները մշակելի ընելու համար։

— Խաշուէի գինն Երուսաղէմ մէջ առ 100 անկում մը կրեր է։— Ռուսական ալիւրներու գինը 25 կոպէկի անկում մը կրեր է։

— Զմիւռնիոյ երևելիներէն Եահեա Հայաթի փաշա և ընկերք մենաշնորհ խնդրած էին Զմիւռնիոյ մէջ ելեկտրաշարժ թրամուէյի գիծ մը հաստատելու համար։ Այտընի երկաթուղւոյ ընկերութիւնը այդ թրամուէյի գծին շինութիւնը իւր շահուց հակառակ տեսնելով, դիմում ըրած է Հանրօգուտ շինութեանց նախարարութեան։

— Եաֆա-Երուսաղէմ երկաթուղւոյն շինութիւնն աւարտելու մօտ է։

— Մարսիլիարնակ յոյն սեղանաւոր Պ. Ստեփանոս Զաֆիրօ'փուլօս, որ սովորութիւն ունի ամէն տարի 1000 օսմ. ոսկի նուիրել ի նպաստ Կ. Պոլսոյ յոյն աղքատիկ դպրոցաց, այս անգամ Պոլիս այցելելուն առթիւ 100 ոսկի նուիրեց Բերայի յոյն Տիկնանց Արուեստանոցին, 500 ոսկի ալ Հէյպէլի կղզւոյն առևտրական վարժարանին։

— Պօշնաքեան էֆէնտի Իւսկիւտարի նաւամատոյցէն Պիւլպիւլ Տէրէի ճամբով մինչեւ Պաղլար Պաշի Թրամուէյի գիծ մը շինելու մենաշնորհ խնդրած է։

— Սապանճի մէջ կը կարդամք թէ Հայոց Նախորդ Պատրիարք Ամեն. Խրիմեան Սրբազան, որ յԵրուսաղէմ, հիւանդացեր է և վիճակը օր ըստ օրէ ծանրանալու վրայ է։

— Դարձեալ Սապանճի մէջ կը կարդամք թէ Պրուսայի Առաջնորդ Գեր. Տ. Բարթուղիմէոս Սրբազան Արքեպիսկոպոս, հետն ունենալով իւր փոխանորդն Արժ. Տ. Արիստակէս վարդապետ Վանքեանը և իւր քարտուղարն Ազնիւ Էֆէնտին, նախընթաց օր Գուզկունճուգ երթալով այցելութիւն տուաւ Պրուսայի Նոր կուսակալ Վսեմ. Մունիր փաշայի առ ի շնորհաւորութիւն։

— Խարբերդի կուսակալ Նուսուհի պէյ, որ Տէրսիմի կողմերը քննական պտոյտ մը կը կատարէ, շաբաթ մը Չմշկածագ մնացեր է։ Տէրսիմի Շամ, Գոչուու Րէսիք Ուշաղը Աշիրէթներու պետերն, որք զինուորաց կողմէ նուաճուած էին, Ն. Վսեմութեան ներկայանալով ի Չմշկածագ, հնազանդութիւն յայտներ են։ Կուսակալը հացկերոյթ տուեր է թէ ատոնց և թէ՛ անդ եկող ուրիշ Աշիրէթներու պետերուն։

— Տրապիզոնի վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ Խուլուսի էֆէնտի, որուն կայս. Իրատէով և Դատական նախարարութեան որոշմամբ պաշտօն յանձնուած էր քննել ինչ ինչ խնդիրներ, օգոստոս 17ին Բաղէշ ժամաներ և քննութեան սկսեր է։

— Բաղէշի գայմագամ Մէհմէտ պէյ Սըղերդ պիտի զրկուի գանձելու համար Աշիրէթներու ոմանց վրայ գտնուած ելմտական գանձուն պահանջները։

—Կայս. Իրատէ մը հրամայած է շինել Թէքման ու Կէօքսուի գիւղախումբերու մէջ երկու վարժարան, մին նախնական և միւսը երկրորդական, ինչպէս եւ փոքր մզկիթ մը, Շէրիֆա ու Բոթնօս գիւղախումբերու մէջ վարժարան մը ու մզկիթ մը և միւսներուն մէջ մէկ մէկ վարժարան։

— Նախընթաց օր ի Պոլիս, Ալթը Մէրմէր, երկու Հայ կիներ ճամբան կը պատահին երկու Հրէից, որոցմէ մէկուն կռնակը խոշոր պարկ մը կար՝ մէջը տձեւ բան մը դրուած, որ կը շարժէր։ Հայ կանայք կասկածելով, կը հետեւին Հրէից մինչեւ որ կը հասնին սրճարանի մ'առջեւ, ուր գտնուած անձանց ուշադրութիւնը կը հրաւիրեն պարկին վրայ։ Հրեայք կը պաշարուին անմիջապէս, բռնութեամբ վար կ'առնուի պարկը՝ որուն մէջ կը գտնուի հինգ վեց տարեկան Աթանաս անուն Յոյն մը, բերանը Թաշկինակ Թխմուած։ Երկու Հրեայք և տղան ոստիկանութեան կը յանձնուին։

— Ծովային նախարարութիւնը դատ բացաւ Գարաքէօյի կամուրջին զարնելով վնասող անգլիական Տէրվէնթ շոգենաւուն ընկերութեան դէմ։

— Պէյքօզի Հայոց եկեղեցւոյն ժամկոչ Խաչիկ, որ նոյն եկեղեցիէն անօթներ գողցած էր, երեք տարւոյ [illegible] աշխատութեան դատապարտուեցաւ։

ՑԱՆԿ ՆԻՒԹՈՑ

1890 Դեկտ. 31 — 17։
Ազգային ժողով — 3. 34. 46։
— Լուրեր 1էն մինչեւ 40 թիւ։
— Հին գրչագիրք — 25. 27. 31. 32. 35. 36. 39։
— Մատենադարան. 31։ Ս. Դափանճ.
— Տուրք և երեսփ. ընտրութիւնք — 26։ Ա. Ա. Սուրէնեան։
Ազգ. և վարժապետութիւն — 14. Սեպուհ։
Ակադեմեայք ընդհանուր աշխարհի. — 29։
Աղէքսանդրիա (Թղթ.) — 18։
Աղուանք և Աւղանք. — 8։ Կ. Յ. Պասմաճեան։
«Աղջկան մը սիրտը» — 47. 49։
Ամբողջ աշխարհի երկաթուղիք — 3։
Ամուսնութիւն. — 23։
Այլ և այլք — 2. 3։
Այցելութիւն մը ի Ճաբոնական մարտանաւն «Հիէյի» — 20։ Լեւոն Մկրտիչեան։
Անգլի. գրականութիւն. — 17. 24. 30. 39. 40։
Անգլիոյ այս տարուան փետր. ամիսը. 52։
Անակնկալ այցելութիւն մը. Ծիր կաքին. 52
Անընկղմելի նաւ մը. — 10։
Անի (Թղթ.) — 26։
Անխոնջ աշխատասիրութիւն. — 23։
Անխուսափելի ճակատագիր — 31։
Անմոռանալի թուականներ — 22. 23. 31։
Անսեղի որոշում մը — 27։
Աշխատութիւն — 3։
Աշնան վարդը — 20։
Աչաց տեսութիւնը պահպանել. — 3։
Առ ալքատիկ ուսանողն. — 3։
— Գրասէրն Ատոմ. — 16։
— Եզոբոս — 1։ Յակոբ Ոսկան։
— Ժամացոյց սենեկին իմոյ — 50։
— Խաչն. — 48։
— «Շաղիկ» աշնանափթիթ. — 4։
— Կարապետ Լփ. Մութաֆեան, մխիթարք. — 38։
Առ Մանկիկն անմեղ. — 25։
— Մելանիա — 2։
— Ոսկետուփս — 39։
— Սիկարիկն. — 10։
— Վաղարշակ. — 19։
Առաջարկութիւն մը Մարգարեան Աշխարհագրութեան առթիւ. — 22։
Առեւտրական — 2. 7. 9։
Առողջաբանական. — 2. 23։
Առողջ մարմին առողջ հոգւով. — 7։
Աստուծոյ գոհարները — 13։
Արարական քաղաքակրթութիւն. — 5։
Արագածի չրջակայքը — 9։
«Արեւելք»ի «Հրանտ»ին. — 36։
Արժէք դրամոց. — 1էն մինչեւ 52 թիւ։
Աւագ շաբաթ. — 32։
Աւետարան մը. — 25. 36։ Կ. Յ. Պասմաճեան
Աւղանահայք — 10։
Աֆիօն-Գարահիսար (Թղթ.) — 51։
Բաբերդ (Թղթ.) — 30. 31. 32. 43։
Բանաստեղծութիւններ Աղէքսանդր Ծատուրեանի. — 37։
Բասդէօռեան պատուաստ — 3։
Բարկութեան ազդեցութիւնը Ֆիզիքական կազմութեան վրայ. — 2։ Sof. Soպrաշեան։
Բ. Դրան Թէզքէրէն. — 6։
Բարձր դասու Հայ աղջկանց կրթութիւն. — 16։ Սիրաf։
— « « իգական սեռն. — 9։ Սիրաf։
Բարոյական առածք. — 27։
— առողջապահութիւն. — 7։
Բժշկութեան մէկ նոր յաղթանակը. — 13։
Բնագիծ յատկութիւնք առն և կնոջ — 51։
Գաթէրին Հաուարտ. — 45։ Լ. Մկրտիչեան։
Գաղատիա — 26. 31։
Գասապա (Թղթ.) — 26։
Գաւառական գործեր. — 28։
Գաւառային կեանք. — 12. 24։ Ա. Սուրէնեան
Գեղջուկ սովորոյթք. — 19. 21. 22։
Գերեզմանի մը առջեւ. — 41։
Գիշեր — 23։
«Գիտնալ նախատեսելու և հոգալու համար» — 4։
Գիտութեան վերաբերեալ մի քանի ճշմարտութիւնք. — 29։
Գնտակ. — 29. 30։
Գող Առաքել. — 9. 10։ Բաջունի։
Գործ կայ, միջոց չկայ. — 15։
Գործք և գործողք. — 1։ Հrաs։
Գրագատական. — 11. 16. 18. 21. 47։
Գրական հրապարակէն. — 38։
— տձեւութիւնք. — 44։
Գրականութեան դերը. — 50։ Ուչէլլօ։
Դաստիարակութեան Նպատակը. — 14։ Ռ. Յ. Պ.
— Պէտքը արհեստական տեսակէտով. 18։ Գ. Սէլվաճեան։
Դատաստան Հայ ձերբակալելոց. — 5. 6. 7. 8. 10։
Դատավճիռ. — 5։
Դատմայ վանք. — 47։
Դարձեալ Հայի «Եռ»ը. — 6։ Լ. Մկrտիչեան։
Դարմանումն կաթուածի. — 16։
Դիտողութիւն մը. — 42։
Դպրոց. — 49։
Դպրոցական առողջապահութիւն. — 15. 18։
Դրախտ կորուսեալ. — 30։
Դրամական. — 10. 21։
Դրամօժիտ. — 3։ Սիrmf։
Եէնի ճամիի պազարը. — 38։ Սիմաf։
Ելեկտրականութիւն. — 43. 44. 45։
Եկեղեցականաց երդմնեցումը. — 7։
Եկեղեցեաց վագֆներ. — 35։
Եղեռնագատ ատեան. — 7։
Եպարքոսական պաշտօնագիր — 29։
Եւրոպական և Հայկական բարբառք. — 5։
Երազն. — 36։
Երախայի մը պատկերին եռեւ. — 4։
Երգիչ Ծատուր. — 45։
Երեսփոխանական ընտրութիւնք. — 34։ Ա. Ս.
Երեք տառեր. — 19։
Երզնկայ (Թղթ.) — 22. 28. 41։
Երկիրն աստղ երկնից. — 29։
Երկու խօսք. — 1։
«Շաղիկ մանկանց»ի դադարման առթիւ. — 12։
Երկու «Շաղիկ» ներու առթիւ. 20։ Յ. Ոսկան։
Երկրագնտիս վախճանը. — 13։
Երկրագործական. —
Երկրի ապագայն. — 36։
Երկրորդ սխալացուցակ Մարգարեան Աշխարհագրութեան. — 18։ Վ. Կ. Ա.
Երուանդ. — 11։
Երջանկութեան ըմբռնումն. 21։ Լ. Մկրկիչեան
Զարմանալի՛ զուգադիպութիւն. — 22։
Զմիւռնիա (Թղթ.) — 13. 20. 34. 49։
Էջմիածնի Աւետարանը և Հայկական գեղարուեստը. — 25։
Է՞ր. — 42։
Էֆէլ աշտարակէն մեծ. — 3։
Ընդ եղեւնեաւ. — 9։
Ընտանիք. — 15։
Ընտրական իրաւունք. 27։ Ա. Ա. Սուրէնեան։
Թատերական — 45
Թէ բարքերն ի՞նչպէս կ'ուղղուին յԱմերիկա. — 32։
Թէ ի՛նչ կարող է ընել մարդ. — 19։
Թէ ինչո՞ւ «Վարդապետ ի Դեղագործութեան». — 23։ Կ. Յ. Պասմաճեան։
Թէ ո՞րն է ճշմարիտ փառքն. — 41։
Թեմօրայք Կեսարիոյ վիճակին և ազգ. հին ձեռագիրք. 41. 47. 48. 50։ Տ. Վ. Պալեան։
Թիֆլիս (Թղթ.) — 33։
Թղթակցութիւնք. — 13. 14. 20. 22............
Թռուցիկ նշմարներ. — 1. 6. 14, 15. 17. 32. 37. 38. 39. 49։ Սիմաf։
Թռչնիկն առ որսորդ. 47։ Ա. Համբարզաբբան։
Ժառանգական խնդիր մը. — 7։
Իմ բաղձանքը. — 25։
Իմ Թռչնիկ. — 49։ Ա. Համբարզաբբան։
Իմ փափաք. — 51։ Ծիր Կաքին։
Իրագիտութիւն. — 35, 36։
Լուսանկարիչ փողկապ. — 13։
Լուսանկարչութիւն. — 12։ Մ. Արապեան։
Խաչատուր Միսաքեան. — 39։
Խաչատուր Միսաքեանի նիւթական կարողութիւնը. — 43։
Խարբերդ (Թղթ.) — 34. 40։
Խարդախեալ յօդուած. — 28։
Խենդը խրատ ի՞նչ ընէ, Սեւը սապոնն ի՞նչ ընէ. — 17։ Սիմաf։
Խղճի խայթը. — 27։
Խղճի յաղթանակը. — 3, 4։
Խորէն եպիսկ. Նար-Պէյ. — 2։
Խորհուրդ Ս. Պատարագի. — 19, 23, 25, 26, 27, 28, 29, 30, 31։ Ջուղայեցի։
ՇԱՂԻԿը չը շփոթել ծաղկի հետ. 1։ Սիմաf։
Շաղկոց. — 18։
Շաղկո՞ց թէ մանկապարտէզ. — 8, 13, 14, 16։
Շաղկոցի դասեր. — 29, 30։ Սեպուհ։
«Շաղկոց»ին Նպատակը. — 20։
Շերունեայ մի լուսանկար պատկերին առջեւ. 3։
Շխախոտի աղբումն. — 9։

Կանոնագրութիւն երկրագործական վարժարանաց .— 35 ։
Կապադովկիոյ գաւառին հին լեզուն և նորա արդի յունարէն գաւառաբարբառը .— 42, 43, 45, 47, 51 ։ Նարճիմ ։
Կ. Վ. Շահնազարեանի կենս. առթիւ .— 42 ։
Կարին (Թղթ.) .— 14, 48 ։
Կեա՞նք թէ մահ .— 12 ։
Կենդանական մագնիսականութիւն .— 22 ։
Կենսագրական .— 15, 17 ։
Կեսարիա (Թղթ.) 31, 40, 43, 44, 45 ։
Կին առնել. մի միայն բանաստեղծելու համար .— 46 ։ Յ. Յ. Պարոնեան ։
Կիրասոն (Թղթ.) .— 27, 43 ։
Կիւրին (Թղթ.) .— 28, 42 ։
Կնոջ իտէալը .— 33 ։
Կովկասէն լուրեր .— 1, 14 ։
Կրթական .— 3, 5, 22, 28 ։
Կրօնական .— 9, 10, 11, 12, 13, 26 ։
Կրօնական կրթութիւն .— 4 ։
Կրօնական հարցում մը .— 52 ։
Համաշխարհային - առողջապահական ժամացոյց . — 1 ։
Համաշխարհայինարտադրութիւնմետաքսի. 3 ։
Համբարձումն Քրիստոնէութեան. 42 ։ Յ. Յ. Պ.
Հայերէնագէտ Պ. Մառ. 37 ։ Կ. Յ. Պասմաճեան ։
Հայի «Ես»ը և Պ. Գր. Նիկողոսեանց .— 1 ։
Հայ լեզուի յիշատակութիւն Վանայ բեւեռագրոց մէջ. — 29 ։ Կ. Յ. Պասմաճեան ։
Հայկական աւանդութիւն մը . — 35 ։
Հանգուցեալ Տիւրկէրեան Բարսեղ էֆէնտի և Հ. Հ. — 30 ։
«Հանդէս ամսօրեայ»ի հասցէին. 37 ։ Կ. Յ. Պ.
Հանրագիր Հայ երեւելեաց . — 11 ։
Հանուրինք, հանուրինք.— 40 ։ Յ. Յ. Պարոնեան ։
Հասարակութիւնը և Գրականութիւնը .— 48 ։
Հարսանեկան ճառ . — 19 ։ Ռ. Յ. Պէրպէրեան ։
Հարսանիքն ի Զմշկածագ . — 23, 24 ։
Հաւատարմական հանրագիր .— 15, 17 ։
Հետազօտութեան օգուտները. 16 ։ Լ. Մկրտչ.
Հետաքրքրի մը հարցումները . — 41 ։
Հին ձեռագիր մը .— 39 ։
Հին յիշատակներ .— 32 ։
Հնախօսական . — 8, 12, 25, 27, 29, 31, 36, 50 ։ Կ. Յ. Պասմաճեան ։
Հնդկաչինական հրաշալիք . — 42 ։
Հնդկաց հոգեբանական աշխարհագրութիւնը . — 10 ։ Վ. Գալբաճեան ։
Հնչակ . — 10
Հոմանիշ բառարան .— 38 ։
Հովուհին . — 31 ։
Հորթի համար ապուր . — 8 ։
Ձկնորսի աղջիկ . — 40 ։
Ձմեռն . — 22 ։
Ձօն առ փոքրիկն Մ. Ա. Թ. — 32 ։
Ճապոնէն Նամակ . — 44 ։ Լ. Մկրտիչեան ։
Ճապոնք և իրենց երկիրը .— 18 ։
Ճաշոց գիրք կամ Տարեգիրք .— 32 ։
Ճերմակ ձիաւորն Ս. Սարգիս . — 23 ։
Մալկարա (Թղթ.) 44, 47 ։
Մահարձան Խաչատուր Միսաքեանի .— 28 ։
Մայրն որդեսէր .— 18 ։
Մանիսա պատմական տեսակէտիւ .— 27 ։
Մանկավարժական . — 20, 25, 26, 29, 30, 35, 36 ։
Մանչի վրայ կամուրջ .— 8 ։
Մանրավէպ . — 3, 4, 9, 10, 11, 12, 13, 15, 16, 37, 38 ։
Մարգարեան Աշխարհագրութեան սխալները— 21 ։
Մաքրութիւն .— 18 ։ Լեպուճ ։
Մելամաղձիկ կոյսն . — 5 ։
Մեծն Աղէքսանդր և մարմինէն անջատեալ գլուխ մը . — 51 ։ Արմ. Թորգոմեան ։
Մեռեալ կինը. 46, 47, 48, 49, 50, 51, 52 ։
Մեռիր որ գովեմ զանձս .— 15 ։ Սիմաֆ ։
Մետաղացումն դիականց . — 15 ։
Մետաքսի վաճառականութիւնն ի Թուրքիա 7 ։
Մեր կեանքէն ։ — 9, 16 ։ Սիրաֆ ։
Մեր կեանքէն պատկեր մը .— 15, 16 ։
Մէթոտ բանախօսութեան .— 37 ։
Մէաժըլէն մճը . — 1 ։
Մէքսիկայի հանքերն .— 3 ։
Միլանն . — 24 ։
Միսաքեանի ժառանգութիւնը .— 44 ։
Միսաքեանի կտակն ու ժառանգորդները. 39 ։
Միսաքեան Պօղոս . — 35, 37 ։
Միքայէլ Անսրի . — 12 ։
Մի քանի դիտողութիւնք Մխիթարեանց նըկատմամբ . — 30 ։
Մի քանի բառէ Հ. Ալիշանի «Այրարատ»ի էջերուն. — 11 ։ Պերճ Պռօշեանց ։
Մուրացիկ կին .— 46 ։
Յակոբ Պարոնեան .— 31, 40 ։
Յարատեւութիւն և յամառութիւն . — 22 ։
Յիշատակ մը անցեալէն . — 19, 21, 22, 24 ։
Յոյնք յԱմերիկա . — 32 ։
Յունական խնդիր . — 20 ։
Նամակք ։ — 4, 7, 13, 25, 29, 34, 48 ։
Նաւավարն իւր մեխակին . — 51 ։
Ներքին Լուրեր .— 1 էն 52 ։
Նմոյշ մաքուր աշխարհաբարի . — 42 ։
«Նոր Աշխարհագրութիւն» Գ. Մարգարեանի .— 16 ։
Նոր Գիւտեր .— 13, 28, 34 ։
Նոր ձայնագրութիւն .— 3 ։
Շահէն . — 38 ։
Շահնազարեանի կտակն .— 3, 4 ։
Շէյքսփիրի Վենետիկոյ վաճառականը. 45էն 52 ։
Շնորհակալութիւն .— 14 ։
Շրջաբերական Տնտ. Խորհրդոյ . — 6 ։
Շրջանաւարտը . — 15, 16 ։
Ողբացեալ Ագաթեանի յուղարկաւորութեան և Թաղման առթիւ .— 43 ։
Ոսկեղջիւրէն Բեահասհանէ . — 37 ։
Ոստիկանական օրագիր . — 5 ։
Ո՞վ էր «Մելքիսեդեկ արքայ Սաղիմայ» . — 36, 39 ։
Ուխտագնացութիւն ի վանս Ս. Նարեկացւոյ . — 52 ։
Ուսուցչական ժողով.— 51, 52 ։
Չէնկիլէր (Թղթ.) .— 49 ։
Չօսըր .— 17 ։
Պատճէն Շահնազարեան կտակի .— 4 ։
Պատմական .— 5, 7 ։
Պատրիարքական կոնդակ .— 29 ։
Պարահանդէ՞ս թէ՛ հանգանակութիւն .— 27 ։
Պարզ բաղդատութիւն մը .— 9 ։
Պերիկլէսի դարը .— 7 ։ Ռ. Յ. Պէրպէրեան ։
Պերճանք .— 2 ։
Պտղատու ծառոց ոռոգումն .— 8 ։
Պրուսա (Թղթ.) .— 31, 33 ։
Պօրա՞ թէ յիմարանոց .
Ջրանիւ .— 2 ։ Ա. Համբարձումեան ։
Ռուսահայոց կարծիքը Պոլսոյ Հայ լրագրութեան վրայ .— 9 ։
Սահարայի կարաւանք .— 1 ։
Սամուէլ Ճօնսըն .— 49 ։
Սանասարեան վարժարանի Ցայտագիր (1891—92) .— 33 ։
Սեբաստիա (Թղթ.) .— 25 ։
Սելանիկ (Թղթ.) .— 40, 47 ։
Սէր և կեանք .— 42 ։
Սէր, Յոյս և Մահ .— 9 ։
«Սիշիլիա» մարտանաւն Իտալիոյ .— 50 ։
Սիֆիլիսի հնութիւնն .— 38 ։
Սնկահանդերձ ի պէտս ջրհանկրաց .— 3 ։
Ս. Բարթուղիմեայ տօնին առթիւ .— 12,
Ս. Էջմիածնի Գէորգեան ճեմարանի անցքը . — 33, 34, 35 ։
Ս. Ղեւոնդեանք .— 25 ։
Ս. Յակոբայ տօնին առթիւ ։— 15 ։
Ս. Յովհան Ոսկեբերան .— 41, 42, 43, 44, 45 ։
Ս. Սահակ Պարթեւ .— 24 ։
Ս. Սարգիս .— 24 ։
Սունկուրլու (Թղթ.) — 25, 40, 48 ։
Սպունգաձայնագիր .— 2 ։
Վագֆ կալուածոց փոխանցումն .— 37, 40 ։
Վաղեմի գերեզմանք .— 4, 6 ։
Վաճառականութիւն ու ճարտարարուեստք Միսիլլի կղզւոյն .— 2 ։
Վարդապետ ի Դեղագործութեան .— 24 ։
Վարդենւոյն արտասուքը .— 21 ։
Վարժապե՞տ թէ՛ գինեպան .— 16 ։
Վարք Քրիստոնէից .— 44 ։
Վեսուվի մէկ բորբոքումը .— 2 ։
Վերելք յԱրարատ .— 7 ։
Վերջին օրը .— 9 ։
Վէպք ի Շէքսփիրոյ .— 17, 18, 19 ։
Վիեննական Մխիթարեանք .— 50 ։
Վոսփորեան գիշերներ .— 21 ։
Տարի մ'ալ անցաւ .— 17 ։
Տէլլ էլ-Ամառնայի պնակիտք .— 50 ։
Տ. Յակոբ քհ. Պէշիկթաշլեան .— 15 ։
Տ. Յովհաննէս Ա. քհ. Հիւնքեարպէյէնտեան .— 17 ։
Տնտեսագիտական .— 2 ։
Տօքթ. Քոխ (Պաստէօր) .— 11 ։
Տօնացոյց մը .— 27 ։
Ցուցակ գրչագրաց և պատմական հնութեանց Ս. Երուսաղէմայ վանուց .— 45 ։
Փեսին ծառը .— 39 ։
Փոքրիկ հրեշտակ մը .— 13 ։
Քահանայն .— 33 ։
Քաղաքական տեսութիւն .— 1, 2, 3 ....
Քաղաքավարութեան կանոնները .— 41, 43 ։
Քարժանկներու ճանկերն .— 20 ։
Քարլայլ .— 39 ։
Քէրվանսէրայի վաճառականութիւնը .— 3 ։
Քիլիս (Թղթ.) 27 ։
Քնայպ ժողովրդապետին Ջրաբուժական դարմանը — 36 ։
Քննադատութեան դէմ թշնամանք . — 23 ։
Քսանեւհինգամեայ Մեզպուրեան վարժարանի .— 3, 4 ։
Քրիստինէ .— 40 ։
Օգափոխութիւն .— 15 ։
Օրթագիւղի պարահանդէսին առթիւ .— 28 ։
Օրտու (Թղթ.) — 20 ։
Ֆիմի .— 37 ։
Ֆրանսական ակադեմիայք և պարգեւք .— 28 ։

ԱՐԺԷՔ ԴՐԱՄՈՑ

Օսմ. լիրան 100 ղրշ. էն

Մէճիտիյէ	107 22	Վենետիկ	103
Քառորդ մէճիտ	106 25	Ռուսիոյ բօլ	89 25
Մանր մէճիտ	102 15	Նափոլէոն	87 5
Մէթալիք	99 20	Գրիմից	51 15
Հինգնոց	101 10	Անգղ. լիրա	110 4
Մանէթ թղթադրամ 8 59			
Գօնսոլիտէ (երեկոյ.)	19 17	Ռում. Երկ. բաժին	63 1/4
Թահվիլ. Օսմ. 4 օ/օ	74 4	Թասլիյէ	49

ԱՐՏՕՆԱՏԷՐ Ա. ՍԱՔԱԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐԵԱՆ
Էսկի-Զապթիէ փողոց, թիւ 61